

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

«-----» ----- 2018 թվական N -----Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N 194-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների հատկացման, շահագործման և սպասարկման մասին» N 194-Ն որոշման N 2 հավելվածի՝

1) 10.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«10.1. ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության 1 1 -», կոմիտե

2) «Ընդամենը» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« Ընդամենը 1692 645 1047»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N 194-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների հատկացման, շահագործման և սպասարկման մասին» N 194-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե) սպասարկելու համար հատկացված է 3 (երեք) ծառայողական ավտոմեքենա՝

սպասարկվող պաշտոնատար անձը/պետական մարմինը	ավտոմեքենայի			
	մակնիշը	արտադրության թվականը	շարժիչի հզորությունը (ծիաուժ)	պետական համարանիշը
կոմիտեի նախագահ՝	Nissan Altima 2.5	2008 թ.	188	052LL55
կոմիտեի գլխավոր քարտուղար	Hyundai Tucson	2008 թ.	142	814LL11
կոմիտե	Toyota Corolla 1.3	2013 թ.	101	707LL60:

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից կատարվելիք ծախսերի խնայողության նպատակով առաջարկվում է կոմիտեին հատկացված ծառայողական ավտոմեքենաների թիվը կրճատել և 3-ի (երեք) փոխարեն սահմանել 1-ը (մեկ), որը կսպասարկի կոմիտեի նախագահին:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Առաջարկվում է ընդունել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով կոմիտեին հատկացված ծառայողական ավտոմեքենաների թիվը կկրճատվի և 3-ի (երեք) փոխարեն կսահմանվի 1-ը (մեկ), որը կսպասարկի կոմիտեի նախագահին՝

սպասարկվող պաշտոնատար անձը	ավտոմեքենայի			
	մակնիշը	արտադրության թվականը	շարժիչի հզորությունը (ծիաուժ)	պետական համարանիշը
կոմիտեի նախագահ՝	Nissan Altima 2.5	2008 թ.	188	052LL55:

**3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք
և նրանց դիրքորոշումը**

Նախագիծը մշակվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից կատարվելիք ծախսերի խնայողություն:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N 194-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանա:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N 194-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՏԻՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների վրա ազդեցությունը					
Ցուցանիշներ	ընթացիկ (n-րդ) տարի		Հաջորդող 3 տարիները		
	Ըստ n - րդ տարվա պետական բյուջեի	Փոխությունը n - րդ տարվա պետական բյուջեի համեմատ	n +1	n +2	n +3
			Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)	Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)	Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)
1	2	3	4	5	6
1. Եկամուտներ	0	0	0	0	0
1.1. պետական բյուջեի եկամուտներ	0	0	0	0	0
1.2. ՏԻՄ եկամուտներ	0	0	0	0	0
2. Ծախսեր	3567.0 հազ. դրամ	-569.1 հազ.դրամ	-1800.0 հազ.դրամ	-1800.0 հազ.դրամ	-1800.0 հազ.դրամ
2.1. պետական բյուջեի ծախսեր	3567.0 հազ. դրամ	-569.1 հազ.դրամ	-1800.0 հազ.դրամ	-1800.0 հազ.դրամ	-1800.0 հազ.դրամ
2.2. ՏԻՄ բյուջեի ծախսեր	0	0	0	0	0
3. Ֆիսկալ ազդեցության գնահատական	0	0	0	0	0
3.1. պետական բյուջե					
3.3. ՏԻՄ բյուջե	0	0	0	0	0
4. Եկամուտների և ծախսերի հաշվարկների մանրամասն ներկայացում (անհրաժեշտության դեպքում կարող է ներկայացվել հավելվածի տեսքով):	(n)- րդ տարվա համար ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի հաշվեկշռում հաշվառված ծառայողական ավտոմեքենաների սպասարկման և վառելիքի համար նախատեսված ծախսերը կազմում են 900.0+2667.0=3567.0 հազ. դրամ: Փոփոխություն n-րդ տարվա պետական բյուջեի համեմատ նախատեսվում է 2997.9 հազ.դրամ, (n+1)-րդ տարվա համար նախատեսվում է 1767.0 հազ. դրամ, (n+2) –րդ տարվա համար նախատեսվում է 1767.0 հազ. դրամ և (n+3)-րդ տարիների համար նախատեսվում է՝ 1767.0 հազ. դրամ:				
4.1. Եկամուտների գնահատում					
4.2. Ծախսերի գնահատում					
5. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)					